ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> << Նոյեմբերի >> 2021թ. N ՄՊ/463-2021

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 8-ի N1459-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 27.09.2021թվականի N01/17/21572-2021թ. գրությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին <<Նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության ապահովում>> ծրագրով տնտեսագիտական դասակարգման <<այլ ընթացիկ դրամաշնորհներ>> հոդվածով նախատեսված 1840 000 /մեկ միլիոն ութ հարյուր քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքին նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ապահովման նպատակով::
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ՝ Ա. Հովհաննիսյանին կնքել դրամաշնորհի հատկացման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ. Մաթևոսյան***

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

22.10.2021

VERIFIED OCSP 22.10.2021 15:57:27 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am